

Առնուդ Թոյնքի
Բրիտանացի պատմաբան, 1915

«Այս բոլոր դաժանությունները կատարվել են հայերի դեմ, նույնիսկ եթե նրանք ոչինչ չեն արել, որ դրանք տեղի տան»:

Անատոլ Ֆրանս
Ֆրանսիացի հեղինակ, 1916

Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց կվերածնվի: Այն մի փոքր արյունը, որ դեռ մնում է, թանկագին է, ու դրանից մի հերոսական սերունդ է ծնվելու: Մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել, չի մեռնի:

Ֆրիտյոֆ Նանսեն
Նորվեգացի քաղաքական գործիչ, 1915

1915-ին սկիզբ առան սարսափներ, որոնք պատմության մեջ հավասարը չունեն: Արդուլ Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատ:

Ժակ դե Մորգան
Ֆրանսիացի գիտնական, 1915

«Արևմտահայերի տեղահանությունները ոչ այլ ինչ են, քան ազգի քողարկված ոչնչացում:
Չկա մի որևէ հարուստ լեզու, որ նկարագրի այդ սարսափները»:

Վալերի Բրյուսով
Ռուս բանաստեղծ, 1917

«Թուրքերը շարունակում են իրենց վաղեմի քաղաքականությունը: Նրանք չեն դադարի իրագործել մասսայական և չափազանց սարսափելի ջարդերը, որ նույնիսկ Լենկ Թեմուրը չէր համարձակվի անել»:

Ֆայեզ ալ Ղուսեին
Արաբ հրապարակախոս, փաստաբան, 1917

«Ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները, որ ականատեսն է ապրում, երբ նա մտածում է այդ հերոսական և դժբախտ ազգի մասին: Նրա քաջությունն ու ոգին զարմացնում են աշխարհին:
Ազգ, որ երեկ Օսմանյան Կայսրության ամենաեռանդուն և առաջադեմ ազգերից մեկն էր, հիշողություն է դառնում»:

**Ժոզեֆ Մարկվարթ
Գերմանացի գիտնական**

«Նույնիսկ Մահմանադրության հռչակումից հետո, թուրքական քաղաքականության հիմնական լոզունգն է եղել Առանց հայերի չի լինի հայկական հարց» (1916):

**Հենրի Մորգենթաու
1913-1916 թթ. Միացյալ Նահանգների դեսպանն Օսմանական Կայսրությունում, «Դեսպան Մորգենթաուի պատմությունը», 1919**

Երբ թուրքական իշխանությունները այդ տեղահանությունների կարգադրությունը տվեցին, նրանք տալիս էին ամբողջ ազգի սոսկ մահվան հրամանագիր: Նրանք սա լավ էին հասկանում, իրենց խոսկցությունների ժամանակ ոչ մի հատուկ փորձ չէին անում այդ փաստը թաքցնելու համար: Ես վստահ եմ, որ մարդկության ցեղի ամբողջ պատմությունը նման սարսափելի դրվագ չի պարունակում: Անցյալի մեծ ջարդերը և հալածանքները գրեթե աննշան են թվում, երբ համեմատվում են հայ ազգի 1915թ. չարչարանքների հետ:

**Ջեյմս Բրայս
Բրիտանացի դերկոմս, 1915, հոկտեմբերի 6, ելույթ**

Ջարդերը հետևանք էին այն քաղաքականության, որին որքան կարելի է պարզել, մի որոշ փուլում հետևում էր թուրքական կայսրությունում ներկայումս իշխանության գլուխ կանգնած անսկզբունք բախտախնդիրների ավագակախումբը: Նրանք տատանվում էին իրագործել այն, մինչև որ ըստ նրանց հարմար պահը հասավ, և այդ պահը ապրիլ ամիսն էր: Լորդերի պալատ՝ Հանսարդ (5-րդ ժողովածու), հատոր XIX, հոկտեմբերի 6, 1915թ.: Ցավում եմ, որ այդպիսի տեղեկությունը ինձ է հասնում շատ ժամեր անց և ցույց է տալիս, որ 800000-ը՝ մայիսից ոչնչացվածների հնարավոր ամբողջ թիվը, որ ազնիվ կոմսը կարծում է անհավատալի, իրոք հավանական թիվ է: Դա այն պատճառով է, որ հարուցված դատական գործերը եղել են բացարձակապես կանխորոշված և շարունակաբար:

**Կոմս Վուլֆ Մետերնիչ
Գերմանիայի դեսպանը Օսմանական Կայսրությանը, 1916, հուլիսի 10, հեռագիր Գերմանիայի կանցլերին**

Իր նպատակը իրագործելու փորձով՝ լուծել հայկական հարցը՝ բնաջնջելով հայ ազգին, թուրքական կառավարությունը մերժում է թե՛ մեր ներկայացուցիչներին, թե՛ ամերիկյան դեսպանատանը, թե՛ Պապի պատվիրակությանը, թե՛ աշնակից ուժերի սպառնալիքներին, թե՛ արևմտյան հասարակության կարծիքին՝ աշխարհի մեկ երրորդը ներկայացնող, որ իրեն ետ պահեն:

**Թեոդոր Ռուզվելտ
ԱՄՆ նախագահ, 1918թ. մայիսի 11, Կլեվելանդ Հողլի Դոջին ուղղված նամակ**

...Հայկական եղեռնը պատերազմի ամենամեծ ոճիրն էր, և Թուրքիայի դեմ գործելու ձախողումը նրա մեղքերին թողություն տալն է...

ձախողում, որ հիմնովին առնչվել է թուրքական սարսափների հետ նշանակում է, որ ապագայում աշխարհի խաղաղության երաշխավորման բոլոր խոսակցությունները չար հիմարություններ են:

Հերբերտ Հուվեր

ԱՄՆ նախագահ, Հերբերտ Հուվերի հուշերից, 1952

Արարատ սարի և Նոյի կապը, օրինապահ քրիստոնյաների, որոնց պարբերաբար կոտորել են մահմեդական թուրքերը, և մոտ հիսուն տարի կիրակնօրյա դպրոցների կազմավորումը՝ նրանց տառապանքները թեթևացնելու համար- բոլորը ամփոփվում են, որ դրոշմեն Հայաստան անունը հայ մտքի դիմաց:

Ջիմի Քարթեր

ԱՄՆ նախագահ, 1978թ. մայիսի 16, Մայիտակ Տան հանդիսություն

Ընդհանուր առմամբ աշխարհին հայտնի չէ, որ 1916 թվին նախորդող տարիներին եղել է համաձայնեցված փորձ՝ բնաջնջել ամբողջ հայ ժողովրդին, հավանաբար ամենամեծ ողբերգություններից մեկը, որ երբեք պատահել է որևէ ազգի հետ: Եվ չեն էլ եղել որևէ նյութաբերական դատավարություններ:

Ռոնալդ Ռեգան

ԱՄՆ նախագահ, 1981թ. ապրիլի 22, հռչակագիր

Հոլոքոստի դասերը, որին նախորդել է հայերի ցեղասպանությունը, և որին հաջորդել է կամբոջացիների ցեղասպանությունը, երբեք չպետք է մոռացվեն:

Ջորջ Բուշ ավագ

ԱՄՆ նախագահ, 1990թ. ապրիլի 20, ելույթ Օրլանդոյում, Ֆլորիդա

Մենք միանում ենք ամբողջ աշխարհի հայերին, քանի որ հիշում ենք Օսմանյան Կայսրության ղեկավարների ձեռքերով 1915 - 1923 թթ. կրած սարսափելի ջարդերը:

Ջոն Էվանս

Հայաստանում ԱՄՆ դեսպանի հղումը ամերիկահայերին 2005թ. փետրվարի 19-ին

«Այսօր ես կանվանեմ այն հայերի ցեղասպանություն: Կարծում եմ, որ մենք՝ ԱՄՆ-ի կառավարությունը, պարտական ենք ձեզ՝ մեր համաքաղաքացիներ, որ ավելի բացեիքաց և ազնիվ քննարկենք այս հարցը:

Ես՝ որպես այս հարցը ուսումնասիրած անձնավորություն, կարող եմ ձեզ ասել – որևէ կասկած չունեմ, թե ինչ է եղել:

Կարծում եմ, որ մեզ՝ ամերիկացիներիս համար անհարմար է այս դեպքում խաղալ բառերի հետ: Համոզված եմ, որ իրերն իրենց անուններով պետք է կոչել»: